




ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ
«ՎԱՐԴԱՆԱՆՑ ԱՍՊԵՏՆԵՐ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹՎ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԷՆ ՈՂԶՈ՛ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ
ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ
ԱՍՊԵՏՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

«Երանի այնցիկ որ սուրբ են սրտիք, զի նոքա զԱստուած տեսցեն»:

Այո՛, սուրբ սրտեր և բարի ձեռքեր հիմը դրին ամերիկահայ կեանքի մէջ նորօրինակ կազմակերպութեան մը, որուն տուին «Վարդանանց» նուիրական անունը: Այդ ձեր կազմակերպութիւնն է, որ ահա կը բոլորէ վաթսուն տարիներու գոյատեւման ու գործնէութեան խաղաղ ու շինարար շրջան մը:

Իրապէս Մեր սրտին մոտ է Վարդանանց Ասպետներուդ կազմակերպութիւնը, իր քրիստոնէական ոգիով, իր եղբայրասէր սկզբունքներով, իր հայանուէր նպատակներով:

Մեզի համար բարձրօրէն գնահատելի է ու մխիթարական, որ մեր պանդուխտ ժողովուրդի ծոցէն ծնունդ առած ձեր շարժումը, վաթսուն տարիներէ ի վեր նուիրուած է հոգեւորոգ բարի գործի՝ ի շինութիւն Ամերիկայի Մեր զաւակաց կրօնական կեանքի, ի պայծառութիւն ձեր եկեղեցիներու և յանադարտ պահպանութիւն մեր ժողովուրդի հայրենական աւանդութիւններուն և տոհմիկ առաքինութիւններուն:

Հայոց լոյս հաւատքի կեդրոն սուրբ Էջմիածնէն, մեր Տիրոջ և Փրկչի օրհնութիւնը կը քերենք ձեր կազմակերպութեան լուսաբնակ հիմնադիրներուն, այժմու բարեջան ղեկավար ասպետներուն և բոլոր անդամներուն, Մեր սրտէն քիսած ամենաբարի մաղթանքով և ջերմագին իղձով, որ երկնային օգնականութեամբ և սուրբ Հոգւոյ շնորհներով, հաստատ ու անադարտ պահպանէք ձեր ուխտը և անխտիր կանգնած ձեր նախնեաց սուրբ հաւատքի վեմին վրա, շարունակէք ձեր կրօնական, ընկերային ու ազգային առաքելութիւնը հետզհետէ առաւել եռանդով, առաւել լաւատեսութեամբ, առաւել արդիւնատուութեամբ:

Սիրով և ուրախութեամբ կը յղենք ձեզի Մեր այս օրհնութեան կոնդա-

կը, ընդառաջելով տիրախնամ թեմիդ առաջնորդ գերաշնորհ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի սրտագին միջնորդագրին, որ վստահ ենք, թէ իր հովանաւորութիւնը պիտի ընծայէ ձեր յոբելեանական հանդիսութեանց:

Ողջո՛ւն և օրհնութի՛ւն վայելուն տարիներու ձեր վաստակին, ողջո՛ւն և օրհնութի՛ւն ձեր յետագայ իրագործումներուն:

Եւ «եղերութ մմանողք Աստուծոյ, իբրև որդիք սիրելիք և գնացէք սիրով՝ որպէս և Քրիստոս սիրեաց զմեզ» ալ և «հնազանդ լերութ միմեանց երկիւղիւն Քրիստոսի» (Եփես. Ե 1, 21). ամէն:

Հարպէ Թ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 3-ն մայիսի
1976 փրկչական ամի,
եւ ի տումարիս հպոց ՌՆԻՆ,
ի մայրական սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 837

